

## ԵՐԲԵՒ

---

Դու յիշում ես...

Ոսկեզօծ, թաւոտ ամպեր... անպատ... անհոգ...

Հովուի մելամաղձոտ սրնգի հնչիւնները... շոգեմեքենայի սուլոցը... ջրերի քաղցրաձայն երգը և հեռաւոր լեռներում նրանց արձագանքը խորհրդաւոր:

Յիշում ես... նուրբ թրթիռներով մեր հոգւոյ խորքն էին թափանցում:

Ուժեղ, ներդաշնակ բաբախում էր մեր կուրծքը... Միտքը ազատ, թևաւոր՝ լողում էր կապոյտ եթերքում, վարդագոյն շողերի հետ խաղում, մարդկային կրքերից բարձր վերօրէն սաւառնում:

Սքանչելի վայրկեաններ:

Բարձրաբերձ, գոռոզ ժայռերը մեզ ժպտում էին մեղմիկ, գեփիւռը՝ գուրգուրում...

Քնքոյշ կանաչը փաղաքշում էր հպարտ դազաթը: Կարկաչիւն վտակը՝ լեռան կուրծքը ողողելով՝ վազում, ընկնում էր անդունդը... Հիւրընկալ ափերի մօտ մարդիկ գտել էին ապաւէն... և ստեղծագործում էին և խնդում...

Յիշում ես...

Երեկոյեան աղջամուղջը գրկում էր լեռներ, հովիտներ... Թախիժ, մզկտող կսկիժ էր թազնուած նսեմացող օրուայ մեղմ—տխրալի ստուէրների մէջ...

Աւաղ... վշտահար, հանգչող ստուէրները ընկան մեր մէջ...

Լուռ էինք...

Եւ վիշտ և տարփանք և սիրաբորբոք իղձեր...  
Ձուլուել էր ամեն ինչ...

Մեր հոգու աչքերի առաջ անցնում էին արհաւ-  
րալից պատկերներ... խոնջացած դէմքեր, դիւղ—քա-  
ղաքներ՝ ոչնչացած հրով և քնքոյշ կանաչը՝ արիւնով  
շաղախուած...

Ամեն ինչ սրբապղծում էին գազանացած մար-  
դիկ...

Դու ինձ հասկացար...

Սեղմելով ձեռքս՝ համբոյր դրօշմեցիր... Այդ տան-  
ջանքի մէջ մենք սէր զգացինք դէպի խեղճ մարդիկ...

Հիւանդոտ, բորբոքուած շրթունքներդ հազիւ շը-  
ջնջացին.

— Կատաղի ալիքները կը տան մեզ հանգիստ...  
Կռռները միասին... արիւնոռչտ գիշատիչների դէմ...

Լեռներում արձագանքը հեգնաբար կրկնեց, հեռ-  
ւում չքացաւ...

— Կռռները միասին...

Դու յիշում ես...

\*  
\* \*

Հիւանդ էի... Օտար երկրում փորձեցի հանգիստ  
որոնել...

Հեռաւոր, աղմկալից, պայծառ, փառաւոր քաղա-  
քում միայնակ թափառում էի յաճախ...

Կեանքը ազատ էր, ստեղծագործող... Իմ շուրջը՝  
հրճուանք, բերկրութիւն:

Փառաշուք քաղաքում անդորր էր տիրում, իսկ  
իմ սրտում՝ փոթորիկ...

Հիւանդոտ լսողութիւնս նշմարում էր պայթոցի  
որոտ, խուլ մոնչիւնը վայրենի ամբոխի... արիւնոռչտ  
ցնծութիւն... Ձգում էի՝ մոլթ գիշերներում թագնուած  
սովի և ցրտի մոռի կսկիծը...

Վերադարձայ...

Կրկին պատահեցինք իրար աւերակ երկրում...

Հեռաւոր, հանգչող օրուայ մեղմ—տխրալի ստու-  
էր ճնէր...

Հանդիպեցինք իրար... ինչպէս հանգուցեալի մօայլ  
դագաղի մօտ՝ երկու ընկերներ... Մեզ միացնում էր  
միայն վիշտը, անհուն վիշտը... Գազանացած մարդ-  
կանց խելագար ոճիրների դիմաց...

Մոռացուած էին և հպարտ մտքեր, և փառաւոր իղ-  
ձեր, և սէր, և հաւատ, և շինարար դործունէութիւն...  
Աւեր և կոտորած... Կոտորած և աւեր...

Միայն մահն էր հանդիսաւոր ծովատիրում յան-  
դուգն՝ փթած ատամները կրճտացնում, հրճւում, աւեր  
և թշուառութիւն փռելով երբեմն ծաղկած աւաններում  
և գիւղերում:

Մենք տանջւում էինք չարաչար... Երկար, յուսա-  
հատ ողբում...

Դու յիշում ես...

Յիշում ես արդեօք մեր այն երգումը, երգում  
սրբազան՝ համբոյրով կնքուած—սրբել արտասուք... ա-  
մոքել ցաւերը... Գազանային ատելութիւնը արմատա-  
խիլ անել վայրենացած մարդկանց սրտերից... սփոփել  
ծով վիշտն ու տանջանքը մեր շուրջ...

Զմոռանաս երբէք... երբէք...

Ն. Բահաթուր